



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 7 ԱՌԻԴԻՏ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ

Քննաթերթ

Խնդիր 1	30 միավոր
Խնդիր 2	20 միավոր
Խնդիր 3	30 միավոր
Խնդիր 4	10 միավոր
Խնդիր 5	10 միավոր
Ընդամենը	100 միավոր

Հուլիս 2026

ԽՆԴԻՐ 1

Այժմ 2026թ. հուլիսի մեկն է: Դուք «Մուռանո» կազմակերպության ավագ աուդիտորն եք և պատասխանատու եք նոր հաճախորդի՝ «Հուսալի շինարար» ՍՊԸ, 2026 թվականի սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա վերջնական աուդիտի պլանավորման համար: «Հուսալի շինարար» ՍՊԸ-ն մասնագիտացած է անհատական պատվերով լողավազանների նախագծման և կառուցման մեջ: Աուդիտի մենեջերը վերջերս հանդիպել է «Հուսալի շինարար» ՍՊԸ ֆինանսական տնօրենի հետ և Ձեզ է տրամադրել հետևյալ նշումները.

Պլանավորման հանդիպման նշումներ

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ի շահույթը մինչև շահութահարկով հարկումը կանխատեսվում է 610 մլն դրամ (2025թ.՝ 490 մլն դրամ), իսկ ընդամենը ակտիվները ակնկալվում է, որ կկազմեն 1,425 մլն դրամ (2025թ.՝ 1,215 մլն դրամ): Ֆինանսական տնօրենը նշել է, որ տնօրենները շատ գոհ են տարվա կանխատեսվող արդյունքներից, քանի որ նրանց վճարվում է պարզևավճար՝ հիմնված շահույթ մինչև հարկումը ցուցանիշի որոշակի տոկոսի վրա:

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն իրականացնում է լողավազանների կառուցում Հայաստանի տարբեր վայրերում գտնվող 20 օբյեկտներում: Բոլոր լողավազանները կառուցվում են համաձայն հաճախորդի անհատական տեխնիկական պահանջների: Հաճախորդները պայմանագրի ստորագրման պահին վճարում են 25% կանխավճար, իսկ մնացած գումարը ենթակա է վճարման, երբ լողավազանի նկատմամբ վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ կառուցվող լողավազանների գծով անավարտ արտադրության մնացորդը կազմում է 380 միլիոն դրամ: 2026թ. սեպտեմբերի 30-ին բոլոր տեղամասերում կիրականացվի անավարտ արտադրության գույքագրում և գնահատում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ աուդիտորական թիմը կմասնակցի անավարտ արտադրության գույքագրումներից միայն վեցին:

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն իր հաճախորդներին առաջարկում է երաշխիք՝ առանց հավելյալ վճարի, որը երաշխավորում է, որ լողավազանները կգործեն ըստ ակնկալիքի երեք տարվա ընթացքում: Ընթացիկ տարվա երաշխիքների գծով պահուստը հաշվարկվել է հասույթի 1.5%-ի չափով: Նախորդ տարի երաշխիքային պահուստը հիմնված էր հասույթի 4.5%-ի վրա: Ֆինանսական տնօրենը կատարել է այս փոփոխությունը, չնայած այն հանգամանքին, որ տարվա ընթացքում շինարարական տեխնոլոգիաների կամ ներկայացված հայցերի մակարդակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն կատարել է 90 միլիոն դրամի ծախսումներ՝ կապված էկոլոգիապես մաքուր շինանյութի նոր տեսակի հետազոտության և մշակման հետ: Մինչ օրս կատարված ծախսումներից 30 միլիոն դրամը դուրս է գրվել (ճանաչվել է որպես ծախս) շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Մնացած 60 միլիոն դրամը կապիտալացվել է որպես ոչ նյութական ակտիվ: Մինչ օրս որևէ ամորտիզացիա չի ճանաչվել, քանի որ շինանյութը դեռևս չի հանձնվել արտադրական շահագործման:

2026թ. հունիսին ընկերությունը պայմանագիր է կնքել 120 միլիոն դրամ արժողությամբ նոր սարքավորումների ձեռքբերման համար: Այն պայմանագրի ստորագրման պահին վճարել է 50 միլիոն դրամ՝ սարքավորումների մատակարարումն ամրագրելու համար, որոնք պետք է մատակարարվեն 2026թ. հուլիսին: Մատակարարի մոտ առաջացած խնդիրների պատճառով մատակարարումը հետաձգվել է և այժմ նախատեսվում է իրականացնել 2026թ. հոկտեմբերին: Հետազոտության և մշակման ծախսերը, ինչպես նաև սարքավորումների գնումը ֆինանսավորելու նպատակով, «Հուսալի շինարար» ՍՊԸ-ն իրականացրել է բաժնետոմսերի արտոնյալ թողարկում գոյություն ունեցող բաժնետերերին՝ յուրաքանչյուր 0.50 դրամ անվանական արժեքով բաժնետոմսի դիմաց 0.75 դրամ գնով:

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ի աշխատավարձի հաշվարկման գործառույթը պատվիրակված է արտաքին սպասարկող կազմակերպությանը՝ «Չատոյան և ընկերներ» ՍՊԸ-ին, որը պատասխանատու է աշխատավարձի հաշվարկի բոլոր փուլերի համար:

«Հուսալի շինարար» ՍՊԸ-ի տնօրենները ճիշտ են բացահայտել իրենց վարձատրության վերաբերյալ որոշ տեղեկատվություն կանխատեսվող ֆինանսական հաշվետվություններում, սակայն չեն իրականացրել ՖՀՄՍ-երով պահանջվող ամբողջական բացահայտում: Տնօրենները հայտարարել են, որ իրենք դա համարում են չափազանց ծանր բեռ և այդ պատճառով մտադիր չեն տրամադրել լրացուցիչ տեղեկատվությունը:

ԱՄՍ 300 «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորումը» տրամադրում է ուղեցույց՝ աուդիտի պլանավորմանն աջակցելու համար:

Պահանջվում է.

ա) Բացատրել աուդիտի պլանավորման օգուտները: (4 միավոր)

բ) Նկարագրել ութ աուդիտորական ռիսկ և բացատրել աուդիտորի արձագանքը յուրաքանչյուր ռիսկին՝ «Հուսալի շինարար» ՍՊԸ-ի աուդիտի պլանավորման ընթացքում: (16 միավոր)

գ) Նկարագրել այն համապարփակ ընթացակարգերը, որոնք աուդիտորը պետք է իրականացնի՝ «Հուսալի շինարար» ՍՊԸ-ի տնօրենների պարզապահարների վերաբերյալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար: (5 միավոր)

դ) Պլանավորման հանդիպման ավարտին «Հուսալի շինարար» ՍՊԸ-ի ֆինանսական տնօրենը աուդիտի մենեջերին նշեց, որ «Մուռանո»-ին որպես աուդիտոր նշանակելու հիմնական պատճառներից մեկը ընկերության՝ տվյալ ոլորտի վերաբերյալ խորը գիտելիքներն էին: Այնուամենայնիվ, որոշակի մտահոգություններ կային այն մասին, թե ինչպես «Մուռանո»-ն գաղտնի կպահի աուդիտի ընթացքում ստացված տեղեկատվությունը, քանի որ այն աուդիտ է անցկացնում ևս երեք շինարարական ընկերություններում, որոնք մասնագիտացած են էկոլոգիապես մաքուր շինանյութերի արտադրության մեջ, ներառյալ՝ «Հուսալի շինարար» ՍՊԸ-ի գլխավոր մրցակցի մոտ: Բացատրել այն պաշտպանական միջոցները, որոնք «Մուռանո»-ն պետք է կիրառի՝ շահերի այս բախումը պատշաճ կերպով կառավարելու համար: (5 միավոր)

(Ընդամենը՝ 30 միավոր)

ԽՆԴԻՐ 2

2026 թվականի հուլիսի 1-ն է: Դուք հանդիսանում եք «Վարդան և ընկերներ» աուդիտորական ընկերության ավագ աուդիտորը: Այժմ վերանայում եք Ձեր հաճախորդ՝ «Վարդիթեր» ընկերությունում ներդրված ներքին վերահսկողության համակարգին առնչվող նշումները: «Վարդիթեր»-ը արտադրում և մեծածախ վաճառում է լյուքս դասի լոգանքի պարագաներ հյուրանոցներին, ինչպես նաև ուղղակիորեն հանրությանը՝ իր գործարանային խանութից: Ընկերության ֆինանսական տարին ավարտվում է 2026 թվականի օգոստոսի 31-ին:

Վաճառքներ

«Վարդիթեր»-ը 2026 թվականի մայիսին ներդրել է վաճառքի նոր համակարգ: Նոր համակարգն այժմ հանդիսանում է հաշվապահական համակարգի ինտեգրված մոդուլ: Այն ամբողջությամբ թեստավորվել է նախքան ներդրումը և մինչև տարեվերջ կաշխատի հին համակարգին զուգահեռ: «Վարդիթեր»-ի ներքին աուդիտի բաժինը պատասխանատու է հին և նոր համակարգերի արդյունքների համադրման, ցանկացած անհամապատասխանության հետաքննության և հետագա քայլերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար:

Ընկերությունում գործում է ամբողջությամբ ավտոմատացված վարկունակության ստուգման ընթացակարգ իր բոլոր նոր հյուրանոցային հաճախորդների համար: Ավտոմատացված համակարգը գեներացնում է ապառիկի սահմանաչափ յուրաքանչյուր նոր հաճախորդի համար, որը վաճառքի տնօրենը հաստատում է նախքան հաճախորդի կողմից որևէ պատվեր տեղադրելը: Նա իր հաստատումը հավաստում է համակարգում:

Ամսական կտրվածքով դեբիտորական պարտքերի գրքի հաշվետարը ներբեռնում է դեբիտորական պարտքերի ժամկետայնության հաշվետվությունը և վերանայում այն՝ չմարված պարտքերը պարզելու համար: «Վարդիթեր»-ի պարտքային ռիսկի հսկողության քաղաքականության համաձայն՝ ավելի քան 30 օր ժամկետանց ցանկացած պարտք փոխանցվում է վարկային վերահսկողության բաժին, որը կապվում է հաճախորդների հետ՝ խնդիրները կարգավորելու և պարտքը հավաքագրելու համար:

Միաժամանակ ամսական կտրվածքով հաշվապահը համադրում է դեբիտորական պարտքերի սինթետիկ հաշիվը դեբիտորական պարտքերի անալիտիկ ցանկի հետ՝ ամսվա վերջի դեբիտորական պարտքերի մնացորդը ստուգելու նպատակով: Ցանկացած համադրվող հոդված փաստաթղթավորվում է, սխալները ուղղվում են ժամանակին, այնուհետև համադրումները վերանայվում և հաստատվում են ներքին հսկողի կողմից:

Աշխատավարձ

«Վարդիթեր»-ն ունի մարդկային ռեսուրսների բաժին, որը պատասխանատու է նոր ընդունվող և ազատվող աշխատակիցների ձևակերպման, ինչպես նաև նոր աշխատակիցների ընդունման հաստատված ձևաթղթերի պատրաստման ու աշխատավարձի հաշվարկի բաժին ուղարկման համար, որպեսզի նոր աշխատակիցները ճիշտ մուտքագրվեն աշխատավարձի հաշվարկման համակարգում: Այնուամենայնիվ, երբ հրատապություն է

առաջանում ներգրավել լրացուցիչ անձնակազմ, ընդունման ձևաթղթերը չեն լրացվում, և դրա փոխարեն արտադրության հսկողը էլեկտրոնային փոստով տեղեկացնում է աշխատավարձի բաժնին՝ հենց աշխատանքը սկսելու օրը:

Արտադրական թիրախներին հասնելու համար աշխատակիցներից պահանջվում է պարբերաբար արտաժամյա աշխատանք կատարել: Արտաժամյա աշխատանքը վճարվում է ամսական կտրվածքով՝ այն ամսվա վերջում, որում կատարվել է աշխատանքը: Արտաժամյա աշխատանքի բոլոր հաշվետվությունները արտադրության վերահսկիչի կողմից վերանայվում են եռամսյակային կտրվածքով՝ արտաժամյա աշխատավարձի վճարումից հետո: Արտաժամյա աշխատանքի հաշվետվությունների վերանայումը հավաստվում է արտադրական տնօրենի ստորագրությամբ:

Աշխատավարձի համակարգն ավտոմատ կերպով հաշվարկում է բոլոր աշխատակիցների աշխատավարձերը և պահումները՝ ելակետային տվյալների հիման վրա: Ելակետային տվյալները պարբերաբար վերանայվում են՝ դրանց ճշգրտությունն ապահովելու համար, սակայն ամսական աշխատավարձի հաշվարկների նկատմամբ ոչ մի ստուգում չի իրականացվում:

Յուրաքանչյուր տարվա մայիսին բոլոր աշխատակիցները ստանում են պարգևավճար, որի գումարը տատանվում է՝ կախված նրանց կատարողականից: Աշխատավարձի բաժնի աշխատակիցները ՄՌ մենեջերից ստանում են պարգևավճարների վերաբերյալ գրավոր ծանուցում, որը հիմնված է միայն տարվա ընթացքում աշխատակիցների կատարողականի վերաբերյալ նրա սուբյեկտիվ պատկերացման վրա: 2026 թվականի պարգևավճարները համակարգ են մուտքագրվել աշխատավարձի հաշվարկման հաշվետարի կողմից: Մայիս ամսվա աշխատավարձի հաշվարկից հետո մի քանի աշխատակիցներ տեղեկացրել են աշխատավարձի բաժնին, որ իրենց վճարված պարգևավճարը չի համապատասխանում իրենց պարգևավճարի ծանուցման նամակին: Սա ուղղվել է 2026 թվականի հունիսին:

Բանկային հաշիվներ

«Վարդիթեր»-ը օգտագործում է օնլայն բանկինգ համակարգ, որը պահանջում է երկփուլանի նույնականացման գործընթաց: Համակարգ մուտք գործելու համար պահանջվում է գաղտնաբառ: Այնուհետև պահանջվում է լրացուցիչ անցակոդ՝ նոր վճարվող անձանց/ստացողների տվյալները համակարգում մուտքագրելու կամ դրամական միջոցներ փոխանցելու համար: Մուտքային տվյալները, ներառյալ՝ գաղտնաբառը և անցակոդը, պահպանվում են ընդհանուր հասանելիության ֆայլում, որը հասանելի է հաշվապահության՝ կրեդիտորական պարտքերի հաշվառման ողջ անձնակազմին:

Հաշվապահը իրականացնում է բանկային հաշիվների համադրումները շաբաթական կտրվածքով: Համադրվող հոդվածները փաստաթղթավորվում և ուղարկվում են ներքին հսկողին՝ վերանայման: Ներքին հսկողը զննում է համադրվող հոդվածները միայն այն դեպքում, եթե այդ հոդվածների հանրագումարը էական է:

Պահանջվում է

Համաձայն ԱՄՍ 265-ի՝ «Ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին տեղեկացումը կառավարման օղակներում գտնվող անձանց և ղեկավարությանը», աուդիտորներից պահանջվում է գրավոր ձևով տեղեկացնել կառավարման օղակներում գտնվող անձանց ներքին վերահսկողության թերությունների մասին, որոնք ըստ աուդիտորի դատողության ուշադրության արժանի են:

ա) Նկարագրեք չորս հանգամանք, որոնք աուդիտորը կարող է հաշվի առնել՝ որոշելու համար, թե արդյոք ներքին վերահսկողության թերությունը հանդիսանում է էական:

Նշում. Այս պահանջին պատասխանելու համար կարիք չկա հղում կատարել իրավիճակի նկարագրությանը: (4 միավոր)

բ) «Վարդիթեր»-ի վաճառքի համակարգի վերաբերյալ.

(1) Նույնականացրեք և բացատրեք երեք ուղղակի վերահսկողություն, որոնց վրա աուդիտորը կարող է ցանկանալ հիմնվել. և (2) Նկարագրեք վերահսկողության թեստ, որը աուդիտորը պետք է իրականացնի՝ գնահատելու համար, թե արդյոք այդ ուղղակի վերահսկողություններից յուրաքանչյուրն աշխատում է արդյունավետորեն:

Նշում. Միավորները հավասարապես կբաշխվեն յուրաքանչյուր մասի միջև: (6 միավոր)

(գ) Նույնականացրեք և բացատրեք հինգ թերություն «Վարդիթեր»-ի աշխատավարձի և բանկային համակարգերում և ներկայացրեք վերահսկողության առաջարկություն՝ այդ թերություններից յուրաքանչյուրը հասցեագրելու համար: (10 միավոր)

(Ընդամենը՝ 20 միավոր)

ԽՆԴԻՐ 3

Այժմ 2026 թվականի հուլիսի 1-ն է: «Լևոնշին»-ը բետոնե պանելների արտադրությամբ զբաղվող ընկերություն է, որը գործում է արտադրական մեծ տարածքում, որտեղ իրականացնում է անընդհատ արտադրություն՝ օրական 24 ժամ, շաբաթական 7 օր: Այս տարածքում են գտնվում նաև երկու պահեստներ, որտեղ պահվում են ընկերության հումքը և պատրաստի արտադրանքը: Ընկերության հաշվետու տարին ավարտվում է հուլիսի 31-ին:

Ընկերությունն ավարտին է հասցնում տարեվերջյան գույքագրման կազմակերպչական աշխատանքները, որն իրականացվելու է 2026 թվականի հուլիսի 31-ին: Պատրաստի պանելները պահվում են առաջին պահեստի 15 շարքերում: Երկրորդ պահեստը նախատեսված է հումքի մեծ կույտերի համար, ինչպիսին է խիճը, որն օգտագործվում է բետոնե պանելների արտադրության մեջ: Գույքագրման իրականացման համար կատարվել են հետևյալ կարգադրությունները.

- **Ղեկավարում և անձնակազմ.** Պահեստի մենեջերը կվերահսկի գույքագրման գործընթացը, քանի որ նա ամենալավն է ծանոթ պաշարներին: Կլինեն հաշվառողների հինգ թիմեր, և յուրաքանչյուր թիմ կազմված կլինի աշխատակազմի երկու անդամից՝ մեկը ֆինանսական, իսկ մյուսը՝ արտադրական բաժնից: Պահեստի աշխատակիցներից ոչ ոք, բացի մենեջերից, չի ներգրավվի գույքագրման մեջ:
- **Հաշվառման ընթացակարգ.** Յուրաքանչյուր թիմ հաշվառելու է պատրաստի արտադրանքի մեկ շարք՝ շարժվելով անցման երկայնքով դեպի վեր, այնուհետև՝ դեպի վար: Քանի որ այս գործընթացը համակարգված է, կարիք չի համարվել, որ թիմը նշումներ կամ դրոշակներ դնի արդեն հաշվառված տարածքներում: Այն բանից հետո, երբ թիմը կավարտի շարքի հաշվառումը, նրանք կհանձնեն իրենց թերթիկները և կստանան նոր թերթիկներ պահեստի մեկ այլ շարքի համար:
- **Ներքին աուդիտ.** Ի լրումն վերոնշյալի, գույքագրմանն աջակցելու նպատակով, կլինեն հաշվառողների երկու թիմեր ներքին աուդիտի բաժնից, և նրանք նույնպես կիրականացնեն պաշարների հաշվառում:
- **Գույքագրման թերթիկներ.** Գույքագրման թերթիկները հաջորդականորեն համարակալված են, և դրանց վրա տպագրված են ապրանքների կոդերն ու նկարագրությունները, սակայն քանակները նշված չեն: Եթե հաշվառողները հայտնաբերեն որևէ պաշար, որը ներառված չէ իրենց թերթիկներում, ապա նրանք պետք է այդ հոդվածը մուտքագրեն առանձին թերթիկի վրա, որը համարակալված չէ: Երբ ողջ հաշվառումն ավարտվի, թերթիկների հաջորդականությունը ստուգվում է, և լրացուցիչ թերթիկները նույնպես հանձնվում են այս փուլում: Բոլոր թերթիկները լրացվում են գրիչով:
- Հաշվառողների կողմից բացահայտված ցանկացած վնասված ապրանք չափազանց ծանր կլինի կենտրոնական վայր տեղափոխելու համար, հետևաբար դրանք պետք է

թողնվեն այնտեղ, որտեղ գտնվում են, սակայն հաշվառողը պետք է գույքագրման թերթիկների վրա նշում կատարի՝ մանրամասնելով վնասվածության աստիճանը:

- Քանի որ «Լևոնշին»-ը անընդմեջ իրականացնում է արտադրություն, գույքագրման ընթացքում հումքի և պատրաստի արտադրանքի մուտքեր ու ելքեր դեպի պահեստ կշարունակվեն տեղի ունենալ, սակայն դրանք հնարավորության սահմաններում կհասցվեն նվազագույնի:
- Արտադրամասում անավարտ արտադրության մակարդակը պետք է գնահատվի պահեստի մենեջերի կողմից: Հավանական է, որ դա կլինի ոչ էական մնացորդ: Բացի այդ, հումքի քանակները պետք է մոտարկվեն՝ չափելով հումքի կույտերի բարձրությունն ու լայնությունը: Նախկինում այս առաջադրանքն իրականացվել է մասնագետի կողմից, սակայն պահեստի մենեջերը վստահ է, որ կարող է ինքնուրույն կատարել այս գործը:

Պահանջվում է.

ա) «Լևոնշին» ընկերության պաշարների գույքագրման կազմակերպչական աշխատանքների համար՝ (1) Բացահայտել և բացատրել ՎԵՑ թերություն, և (2) Ներկայացնել առաջարկություն յուրաքանչյուր թերության հասցեագրման համար:

Ընդհանուր միավորները հավասարապես կբաշխվեն յուրաքանչյուր մասի միջև (12 միավոր):

բ) Դուք «Դերվիշ» ընկերության ավագ աուդիտորն եք և պատասխանատու եք «Լևոնշին» ընկերության պաշարների աուդիտի համար: Դուք ներկա եք գտնվելու 2026 թվականի հուլիսի 31-ի տարեվերջյան պաշտոնական գույքագրմանը: Բացի այդ, Ձեր մենեջերը ցանկանում է առաջին անգամ կիրառել ավտոմատացված գործիքներ և տեխնիկաներ՝ «Լևոնշին» ընկերության պաշարների աուդիտում վերահսկողության թեստեր և համապարփակ թեստավորման ընթացակարգեր իրականացնելու համար:

Նկարագրեք այն ընթացակարգերը, որոնք աուդիտորը պետք է իրականացնի «Լևոնշին» ընկերության պաշարների գույքագրման ժամանակ՝ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար: (6 միավոր)

«Լևոնշին» ընկերության պաշարների շրջապտույտի և տարեվերջյան պաշարների մնացորդի աուդիտի համար՝

(i) Նկարագրեք չորս աուդիտորական ընթացակարգ, որոնք կարող են իրականացվել ավտոմատացված գործիքների և տեխնիկաների կիրառմամբ: (4 միավոր)

(ii) Բացատրեք ավտոմատացված գործիքների և տեխնիկաների կիրառման հնարավոր առավելությունները, և (4 միավոր)

(iii) Բացատրեք ավտոմատացված գործիքների և տեխնիկաների կիրառման հնարավոր թերությունները: (4 միավոր)

(Ընդամենը՝ 30 միավոր)

ԽՆԴԻՐ 4

Դուք «Ուստա աուդիտ» ընկերության աուդիտի ավագ աուդիտորն եք և աշխատել եք հանրային հետաքրքրություն չներկայացնող «Բարեգործ» ընկերության արտաքին աուդիտի վրա այն պահից ի վեր, երբ երկու տարի առաջ ձեր ընկերությունը նշանակվեց որպես արտաքին աուդիտոր:

«Բարեգործին»-ին է պատկանում ինը մանկապարտեզներից բաղկացած ցանց, և այն հաջողակ ընկերություն է: «Բարեգործ»-ը միշտ ենթարկվել է սանիտարահիգիենիկ կանոններին, հատկապես սննդի պատրաստման գործընթացի մասով: Չհամապատասխանելը կարող է հանգեցնել խոշոր տուգանքի կամ համապատասխան մանկապարտեզի փակմանը:

«Բարեգործ»-ի ղեկավարությունը վերջերս ձեզ տեղեկացրել է, որ սանիտարահիգիենիկ կանոնները թարմացվել են և այժմ շատ ավելի խիստ ու բարդ են, քան նախկինում:

Այս ամենը հաշվի առնելով՝ ղեկավարությունը խնդրել է ձեր ընկերությանն իրականացնել սանիտարահիգիենիկ կանոններին «Բարեգործ»-ի համապատասխանության դիտարկում՝ թույլ տալու համար ղեկավարությանը գնահատել, թե արդյոք պատշաճ գործընթացներ են ներդրվել ինը մանկապարտեզներից յուրաքանչյուրում: Ակնկալվում է, որ դիտարկումը չի ներառելու հաշվապահական խորհրդատվության տրամադրում կամ ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած տվյալների պատրաստում:

Առաջադրանքն, ամենայն հավանականությամբ, շատ շահութաբեր կլինի: Ձեր ընկերությունն ունի բավարար փորձ վերը նշված դիտարկման առաջադրանքը ստանձնելու համար:

1. Չնայած հաջողակ ընկերություն ղեկավարելուն՝ «Բարեգործ»-ի ղեկավարությանը հաճախ է անհրաժեշտ եղել հիշեցնել որոշ հիմնարար սկզբունքներ, և դուք հաճախ ստիպված եք լինում բացատրել հիմնական հասկացությունները:

Հետևյալ պնդումներից որն է լավագույնս սահմանում արտաքին աուդիտը.

ա) Արտաքին աուդիտը աուդիտորների կողմից իրականացվող գործընթաց է՝ կարծիք հայտնելու համար այն մասին, թե արդյոք ընկերության ֆինանսական հաշվետվությունները արժանահավատորեն են ներկայացված

բ) Արտաքին աուդիտը գործընթաց է, որն իրականացվում է ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք հայտնելու համար

գ) Արտաքին աուդիտի նպատակն է բացահայտել ընկերության ներսում թերությունների ոլորտները և ներկայացնել առաջարկություններ այդ թերությունները մեղմելու (վերացնելու) համար:

դ) Արտաքին աուդիտը տրամադրում է բացասական հավաստիացում ընկերության ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ և իրական լինելու վերաբերյալ:

(2 միավոր)

2. Ղեկավարությունը նաև դժվարացել է տարբերակել իր պատասխանատվությունը արտաքին աուդիտորի պատասխանատվությունից այնպիսի հանգամանքներում, ինչպիսիք են խարդախության ու սխալների կանխարգելումն ու հայտնաբերումը, և կանոնակարգերին համապատասխանությունը:

Հետևյալ պնդումներից ո՞րն է լավագույնս նկարագրում «Ուստա աուդիտ»-ի պատասխանատվությունը «Բարեգործ»-ի՝ սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն ԱՄՍ 250 «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների ուսումնասիրումը» ստանդարտի.

ա) «Ուստա աուդիտ»-ը պետք է ակտիվորեն կանխարգելի և հայտնաբերի օրենքների և իրավական պահանջների հետ անհամապատասխանությունները:

բ) «Ուստա աուդիտ»-ը պետք է իրականացնի հատուկ աուդիտորական ընթացակարգեր՝ հնարավոր անհամապատասխանությունները բացահայտելու համար:

գ) «Ուստա աուդիտ»-ը պետք է ձեռք բերի բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ օրենքներին և իրավական պահանջներին «Բարեգործ»-ի համապատասխանության վերաբերյալ, քանի որ դրանք ուղղակի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

դ) «Ուստա աուդիտ»-ը չունի որևէ պատասխանատվություն, քանի որ հիգիենայի կանոնակարգերը ուղղակի ազդեցություն չունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

(2 միավոր)

3. Սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխանության դիտարկման համար պատասխանատու գործընկերը ձեզ տեղեկացրել է, որ այս առաջադրանքը հանդիսանում է հավաստիացման առաջադրանք :

Հետևյալներից ո՞րը նշանակություն չէր ունենա գործընկերոջ համար այս կարծիքը ձևավորելիս.

ա) Եռակողմ հարաբերությունների առկայությունը

բ) Համապատասխան չափանիշների առկայությունը

գ) Էականության որոշումը

դ) Առաջադրանքի առարկան

(2 միավոր)

4. Դիտարկման առաջադրանքի համար պատասխանատու գործընկերը խնդրել է ձեզ ասել, թե, ձեր կարծիքով, հավաստիացման ինչ մակարդակ պետք է տրամադրի «Ուստա աուդիտ»-ը, և ինչ տեսակի կարծիք պետք է տա ընկերությունը:

Հավաստիացման իր մակարդակը և կարծիքի իր ձևակերպումը կարող են տրամադրվել այս դիտարկման առաջադրանքի շրջանակներում.

	Հավաստիացման մակարդակ	Կարծիքի ձևակերպում
ա)	Ողջամիտ	Դրական
բ)	Ողջամիտ	Բացասական
գ)	Սահմանափակ	Դրական
դ)	Սահմանափակ	Բացասական

(2 միավոր)

5. Աուդիտորական առաջադրանքի գործընկերը ձեզ տեղեկացրել է, որ «Ուստա աուդիտ»-ի կողմից դիտարկման առաջադրանքի իրականացումից բխող անկախության սպառնալիքները պետք է ուշադիր հսկվեն:

Հետևյալներից ի՞րն է, ամենայն հավանականությամբ, ամենամեծ մտահոգությունը պատճառելու աուդիտորական առաջադրանքի գործընկերոջը՝ համաձայն «Էթիկայի և մասնագիտական վարքագծի կանոնագրի».

ա) «Ուստա աուդիտ»-ին արգելվում է աուդիտորական հաճախորդին մատուցել հավաստիացման այլ ծառայություններ

բ) Համապատասխանության դիտարկման առաջադրանքը, ամենայն հավանականությամբ, կառաջացնի ինքնաստուգման սպառնալիք, քանի որ դիտարկման արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ֆինանսական հաշվետվությունների համար, որոնք աուդիտորական թիմը պետք է աուդիտի ենթարկի

գ) Դիտարկման առաջադրանքի շահութաբեր բնույթը կարող է արտաքին աուդիտի թիմին ավելի քիչ հակված դարձնել ղեկավարությունից պահանջելու ճշգրտումներ կատարել կամ ձևափոխված աուդիտորական եզրակացություն հրապարակել՝ դիտարկման առաջադրանքը կորցնելու վախից դրդված

դ) Եթե նոր դիտարկման առաջադրանքի պատճառով «Բարեգործ»-ից «Ուստա աուդիտ»-ի ստացած վճարների եկամուտը գերազանցի ընկերության ընդհանուր վճարների 15%-ը, «Էթիկայի և մասնագիտական վարքագծի կանոնագիրը» սահմանում է, որ նոր առաջադրանքը պետք է մերժվի **(2 միավոր)**

(Ընդամենը՝ 10 միավոր)

Խնդիր 5

Դուք «Սիլիկոնյան աուդիտ» ընկերության աուդիտի մենեջերն եք և նշանակվել եք «Թոքեն» ընկերության աուդիտին, որը նախատեսում է ցուցակվել Նյու Յորքի ֆոնդային բորսայում վեց ամսվա ընթացքում: Ֆոնդային բորսայի ցուցակման կանոնները պահանջում են համապատասխանություն կորպորատիվ կառավարման սկզբունքներին, և տնօրենները վստահ չեն, թե արդյոք իրենք հետևում են լավագույն փորձին այս առումով: Նրանք խնդրել են աուդիտորական առաջադրանքի գործընկերոջը հայտնել իր տեսակետը այս հարցի վերաբերյալ:

«Թոքեն»-ի խորհուրդը բաղկացած է վեց գործադիր տնօրեններից, մեկ ոչ գործադիր նախագահից և երեք այլ ոչ գործադիր տնօրեններից: Նախագահը և ոչ գործադիր տնօրեններից մեկը «Թոքեն»-ի նախկին տնօրեններ են, և կենսաթոշակային տարիքի հասնելուն պես նրանց խնդրել են ստանձնել ոչ գործադիր դերեր: Ընկերությունը հիմնել է աուդիտի կոմիտե, և բոլոր ոչ գործադիր տնօրենները հանդիսանում են աուդիտի կոմիտեի անդամ, ներառյալ նախագահը, ով ղեկավարում է կոմիտեն: Աուդիտի կոմիտեի բոլոր չորս անդամները նախկինում ներգրավված են եղել վաճառքի կամ արտադրության հետ կապված դերերում:

Բոլոր տնօրենները խորհրդի անդամ են հանդիսանում առնվազն չորս տարի: Քանի որ նախագահը չունի գործադիր դեր, նա կրում է միանձնյա պատասխանատվություն բաժնետերերի հետ կապ պահպանելու և նրանց հարցերին պատասխանելու համար: Ընկերությունը չի հիմնել ներքին աուդիտի գործառույթ՝ ներքին հսկողությունը վերահսկելու համար:

1. Հետևյալ հատկանիշներից որոնք են հանդիսանում կորպորատիվ կառավարման թերություններ, որոնք «Թոքեն»-ը պետք է հասցեագրի նախքան իրենց ցուցակումը.

1) Նախագահը կրում է միանձնյա պատասխանատվություն բաժնետերերի հետ կապ պահպանելու համար

2) Ընկերությունը չի հիմնել ներքին աուդիտի գործառույթ

3) Նախագահը և ոչ գործադիր տնօրեններից մեկը «Թոքեն»-ի նախկին գործադիր տնօրեններ են

ա) միայն 1-ը և 2-ը

բ) միայն 1-ը և 3-ը

գ) միայն 2-ը և 3-ը

դ) 1-ը, 2-ը և 3-ը

(2 միավոր)

2. Աուդիտորական առաջադրանքի գործընկերոջ դիտարկումը բացահայտել է կորպորատիվ կառավարման հետևյալ լրացուցիչ թերությունները.

(1) Բոլոր տնօրենները խորհրդի անդամ են հանդիսանում առնվազն չորս տարի:

(2) Խորհուրդը բաղկացած է վեց գործադիր և չորս ոչ գործադիր տնօրեններից:

Հետևյալներից ընտրելով կառաջարկեր աուդիտորական առաջադրանքի գործընկերը՝ այս թերությունները հասցեագրելու և կորպորատիվ կառավարման սկզբունքներին համապատասխանությունն ապահովելու համար.

	Թերություն 1	Թերություն 2
ա)	Տնօրենները պետք է ենթարկվեն տարեկան վերընտրության	Խորհրդի անդամների առնվազն 50%-ը, չհաշված նախագահին, պետք է բաղկացած լինի ոչ գործադիր տնօրեններից, որոնց խորհուրդը համարում է անկախ:
բ)	Տնօրենները պետք է ամեն տարի վերանշանակվեն նախագահի կողմից	Խորհրդի առնվազն 75%-ը պետք է բաղկացած լինի գործադիր տնօրեններից:
գ)	Տնօրենները պետք է ենթարկվեն տարեկան վերընտրության	Խորհրդի առնվազն 75%-ը պետք է բաղկացած լինի գործադիր տնօրեններից:
դ)	Տնօրենները պետք է ամեն տարի վերանշանակվեն նախագահի կողմից	Խորհրդի անդամների առնվազն 50%-ը, չհաշված նախագահին, պետք է բաղկացած լինի ոչ գործադիր տնօրեններից, որոնց խորհուրդը համարում է անկախ:

(2 միավոր)

3. Աուդիտորական առաջադրանքի գործընկերը գնահատել է աուդիտի կոմիտեի կազմը:

Հետևյալներից որոնք կլինեին հիմնավորված եզրակացություններ այս գնահատումից.

(1) Ընդունելի է, որ խորհրդի նախագահը ղեկավարի աուդիտի կոմիտեն:

(2) Պետք է ներգրավվի աուդիտի կոմիտեի նոր անդամ, ով ունի համապատասխան ֆինանսական փորձառություն:

ա) միայն 1-ը

բ) միայն 2-ը

գ) 1-ը և 2-ը

դ) ո՛չ 1-ը, ո՛չ 2-ը

(2 միավոր)

4. Տնօրենները տեղյակ են, որ կորպորատիվ կառավարման դրույթների համաձայն՝ իրենք պատասխանատվություն են կրում ընկերության ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգի համար, սակայն հստակ չեն պատկերացնում այդ պատասխանատվության շրջանակը:

Հետևյալներից ճիշտ նկարագրում նրանց պատասխանատվությունը.

	Իրականացնել ներքին հսկողության մոնիտորինգ և տարեկան կտրվածքով վերանայել դրանց արդյունավետությունը	Տարեկան հաշվետվության մեջ ներկայացնել բոլոր էական հսկողական մեխանիզմների արդյունավետությունը
ա)	Ոչ	Ոչ
բ)	Այո	Ոչ
գ)	Ոչ	Այո
դ)	Այո	Այո

(2 միավոր)

5. «Թոքեն»-ի խորհուրդը դիտարկում է ներքին աուդիտի գործառույթ հիմնելու հարցը:

Հետևյալ գործոններից որո՞նք տեղին կլինեն այս որոշումը կայացնելիս.

(1) Այն կօգնի աուդիտի կոմիտեին իրականացնել ներքին հսկողության համակարգի մոնիտորինգի իր պարտականությունները:

(2) Խորհուրդն այլևս կարիք չի ունենա պատասխանատվություն կրել խարդախությունների և սխալների կանխարգելման ու բացահայտման համար:

(3) Ներքին աուդիտի գործառույթի հիմնման ծախսերը պետք է համադրվեն ստացվելիք օգուտների հետ:

ա) միայն 1-ը և 2-ը

բ) միայն 1-ը և 3-ը

գ) միայն 2-ը և 3-ը

դ) 1-ը, 2-ը և 3-ը

(2 միավոր)

(Ընդամենը՝ 10 միավոր)